

ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԱՏԱՐԿ ԹՈՒՂԹԻՆ՝ էջ 206, 289 (Կէսէն) — 396. Երկու դատարկ բուրբ ցանկ գրքին սկիզբն եւ վերջը իբրեւ պակասակ: — ԽՈՐԱՆ, ԶԱՐ- ԳԱԳԻՐ ԵՒՆ չկայ: Գրուած է միակեան, առանց գլխա- կարգութեան եւն: Հատուածներու սկզբնատարիք ան- գիր բողոքած, հաւանօրէն ապա կարմրագիր գրելու համար: — ՏԵՂԻ՝ հաւանօրէն լվով: — ԳՐԻԶ՝ Մի- մէն դպիր Զամոսցացի՝ հեղինակն գործոյս: — ԺԱ- ՄԱՆԱԿ՝ 1619—1635:

Մատենան է՝ Սիմէոն դպրի Լեհացոյ (Չամոսցացոյ) Ուղեգրութիւնն եւ Տարե- գրութիւնը, առանց խորագրի: Կը սկսի այս- պէս.

էջ 1. «Ես մեղաւորս եւ անարժան, բիւր ջանքարոյ պարտական... Սիմէոն անուն, որ- զի Մարտիրոսի...: Եւ կ'աւարտի (էջ 395) այսպէս. «Իսկ ի թվին Ռէշէ, սեպտեմբեր ամ- սոյ: Եկն ի Լէհ էջմիածնայ Մեղքիսէթ կա- թողիկոսն... եւ կացին ի Լով կէս տարի».

Սիմէոն դպիր, որդի Մարտիրոսի, 1608, փետրուար 15ին մեկնելով Լվովէն, նոյն տարւոյն կը հասնի Կ. Պոլիս. հոս կը մնայ երկար, սպասելով առթի, Երուսաղէմ ուխտի երթալու: 1610ին Մկրտիչ Վ. Խարբերդցոյ ընկերանալով կ'ուղեւորի Զմիւռնիա եւ չըջա- վայելով ծովեզերեայ քաղաքները կը վերա- դառնայ Կ. Պոլիս: 1611ին Զաքարիա Վ. Վա- նեցոյ հետ կը մեկնի Վենետիկ—Հոռոմ: Հոն երկար դադար կ'առնէ: Ասկէ Վենետիկ— Զմիւռնիա—Պրուսա—Խարբերդ դժով կը հասնի Մուշ: Վերադառնալով Կ. Պոլիս՝ կը նստէ Աղեքսանդրիա եւ Գահիրէի ճանապարհ- հով կը ժամանէ Երուսաղէմ: Ժամանակ մը կը մնայ հոն: Հալէպ—Կեսարիա—Անկիւրիա ճանապարհով կը վերադառնայ Կ. Պոլիս, ասկէ ալ Լվով, 1619ին:

Ճանապարհին տեսածներն ու լրատուները գրի առած է Սիմէոն: Ընդարձակ նկարա- գրած է Կ. Պոլիս, Վենետիկ, Հոռոմ, Մուշ, Գահիրէ, Երուսաղէմ, Հալէպ, Ամիթ (Տի- գրանակերտ) եւ Լվով քաղաքները: Իր Ուղե- գրութեան կցած է Սիմէոն 1619—1635 տա- րիներու Տարեգրութիւնը:

Սիմէոնի այս Ուղեգրութիւնն եւ Տարե- գրութիւնը լոյս տեսաւ առաջին անգամ Հան- դէս Ա. մ. ս. օ. բ. ա. յ. ի մէջ 1932—1934 տա- րիներուն, եւ ապա առանձին հատորով. Սի-

մէոն դպրի Լեհացոյ Ուղեգրութիւն, Տարե- գրութիւնն եւ Յիշատակարանը: Ուսումնա- սիրեց եւ հրատարակեց Հ. Ն. Ակիմեան, Վիեննա 1936, էջ 1—384:

Հմտ. Macler: REA 7 (1927), 126—127:

21.

Բ Ա Ռ Ա Գ Ի Ր Ք

Cod. arm. 50. — ԺԷ. դար:

ԹՈՒՂԹ՝ 102: — ՄԵՏՈՒԹԻՆ՝ 19,7×15,7 հմ.: — ՆԻԻԹ՝ բուրբ: — ԳՐԶՈՒԹԻՆ՝ երկսիւն: — ԳԻՐ՝ նոտր-շղագիր: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ՏԵՂԻ՝ Լե- հաստան անշուշտ: — ԳՐԻԶ՝ անճամօք: — ԺԱՄԱ- ՆԱԿ՝ ԺԷ. դար:

Մատենան է՝ Բառագիրք, հետեւեալ բո- վանդակութեամբ.

- 1. էջ 1—31. (Բառք Երբայեցոց) . Աղամ. երկիր կամ կոյս կամ երկիր մարմնացեալ կամ երկիր կարմիր կամ յերկրէ...:
 - 2. էջ 31—135. Այս բառք են զերթողա- կան...: Աստուածազան, աստուածաղարդ...:
 - 3. էջ 135—141. Մեկնութիւն բառից քե- րականին:
 - 4. էջ 141. Թարգմանութիւն Պարսից բառից Վարդան գրոց:
 - 5. էջ 142—163. Բառք որ ինչ ի խորանն եւ այլոց անյայտից:
 - 6. էջ 164—177. Հանդէս բանաստեղ- ծաց...: Անհաս, անճառ...:
 - 7. էջ 178—203. Սահմանք իմաստասի- րականք: Աստուած վսեմական...:
- Յիշատակարան չունի:
- ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆ. էջ 43. Լու- սանցքի վրայ, ուրիշ գրչէ. «Ի գրոց ժամի Զամոսցեայ չէն քաղաքին հողաբարձու անար- ժան Սիմէօնի ծերունոյն Սղէզքեվեանց 1720»:
- Հմտ. Macler: REA 7 (1927), 148:

22.

Բ Ա Ռ Ա Գ Ի Ր Ք Հ Ա Յ Ե Ր Ե Ն - Թ Ա Թ Ա Ր Ե Ր Ե Ն

Cod. arm. 51. — Ռէշէ = 1628:

ԹՈՒՂԹ՝ 179: — ՄԵՏՈՒԹԻՆ՝ 19,5×15,3 հմ.: — ՆԻԻԹ՝ բուրբ: — ԳՐԶՈՒԹԻՆ՝ միասիւն: — ԳԻՐ՝ նոտր: — ԿԱԶՄ՝ մագաղաբապատ (մասն լատի- ներէն ձեռագրի մը): — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ, տեղ տեղ անջատուած են բարբը: — ԳԱՏԱՐԿ՝ էջ 2—16: — ԶԱՐԳԱԳԻՐ ԵՒՆ՝ չունի: — ՏԵՂԻ՝ անճամօք: — ԳՐԻԶ՝ Մկրտիչ որդի Ղազարի: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1628:

Մատենան է՝ Հայերէնէ-թաթարերէն Բա- ռագիրք. կը բովանդակէ՝

- 1. էջ 1. Հայերէն առակաձեւ խօսքեր քա- ղուած Ս. Գրքէն, առընթեր անոնց լատինե- րէն թարգմանութիւնը:
 - 2. էջ 17—20. Ս. Գրքի ինչ ինչ դժուա- րիմաց բառերու մեկնութիւնն Հայերէն, լա- տիներէն եւ լեհերէն:
 - 3. էջ 21—354. Բառք Երբայեցոց եւն (տե՛ս Թ. 21) թարգմանուած թաթարերէնի. այսպէս.
- Ա՛. խորխուտան քիմաս խշխրաս:
- Արանա՛. աղանընկ ալըլի:
- Արբա՛. աղալարնընկ աթասը. սարդիս- տա:
- Արբան. պիլիքլիք. Եղեկ. Ի: ...
- Կ՛աւարտի այսպէս՝
- Քուրք. խըլըզ դօվուշեա սօքունչ:
- Քուրքուրի. պաշխա պաշխա:
- Քուր. էրուչի սաղըզ քուրայ:
- Քուէից.
- Քուիոր. ուչու:
- Բառագրքիս թաթարերէն թարգմանու- թեան առաջին փորձն է, հաւանօրէն սկզբնա- գիրք. տեղ տեղ սողեր դատարկ ձգուած՝ թերեւս յաւելուածներու համար: Կան եր- կրորդ գրչէ ալ աւելցուած բառեր՝ լեհերէն բացատրութեամբ:
4. էջ 357—360. Անունք քաղաքաց (Հայերէն): Աւետեաց երկիրն՝ Երուսաղէմ է...:
- ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. էջ 356. Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն:
- Աւարտեցաւ ի թվ. Ռէշէ. մարտի ամ- սոյն ԺԷ: Զեռամբ մեղապարտ Մկրտչի Ղա- ղարի որդոյ: Ով եղբարք, աղաչեմ զձեզ, որ կարգայք ի վերայ սորա կամ օրինակէք ի սմանէ, յիշել կու հայցեմ ի ձեզանէ մէկ Հայր մերիւն: Եւ յիշողք յիշեալ լիցին ի միւսան- դամ դալստեանն Քրիստոսի. որ եկեալ նո- րոգեցէ փառօք ի փառս:
- Հմտ. Macler: REA 7 (1927), 147:

23.

Բ Ա Ռ Ա Գ Ի Ր Ք

Cod. arm. 62. — ԺԷ/ԺԸ. դար:

ԹՈՒՂԹ՝ 104: — ՄԵՏՈՒԹԻՆ՝ 12,5×7,5 հմ.: — ՆԻԻԹ՝ բուրբ: — ԳԻՐ՝ նոտր: — ԳՐԶՈՒԹԻՆ՝ երկսիւն: — ԿԱԶՄ՝ սպիտակ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ. էջ 200—208 դատարկ. ուր կան տեղ տեղ ուրիշ

ձեռք գրուած հաշիւներ են: — ՏԵՂԻ Եւ ԳՐԻԶ՝ ան- ճամօք: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԷ/ԺԸ. դար:

Մատենան է՝ «Բառգիրք իմաստասիրա- կան բարից Հայոց եւ Լատինացոց»: Կը սկսի այսպէս. Ազահութիւն, Avaritia, Ազգաբա- նութիւն, Genealogia եւն: Վերջ՝ Օտարա- նալ, Alienari. Օրացոյց, Diarium:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆ. էջ 1, ստորեւ. Joannes Alexandrowicz:

էջ 192. Hristophorus Szymonowicz.

էջ 209 (կողին վրայ). էքս լիպրիս Ան- դրէէ Բիրուսովիչ. Pirumowicz:

Հմտ. Macler: REA 7 (1927), 131:



Հ Ր Ե Ն Ե Վ Ե Ն Գ Ո Ր Գ Ե Ր Ը

ԳՐԵՅ՝ ԶՏԵՆԿՈ ՀՕՅՐԻՆՏԵՐ*

1.

Վերջին յիսուն տարուան ընթացքին գոր- գերու պատմութեան շուրջ մատենագրու- թիւն մը գոյացած է, ուր կը հանդիպինք վէճի նիւթ եղած, խորհրդաւոր ու լուսա- բանութեան կարօտ հարցի մը. այդ՝ Հայկա- կան Գորգերու հարցն է: Այդ հարցի լուծ- ման նպաստելու բաղձանքն է, որ ծնունդ տուաւ ներկայ երկասիրութեանս:

Հին խուզարկուներ, ինչպէս Riegl, Bode, Martin, Հայկական Գորգերու հայրե- նիքը գանազան տեղեր կը փոխադրեն. այս- պէս՝ Riegl կը ընէ Կենդրոնական Ասիա, Bode՝ Ասորիք, Martin, գորգադիտութեան վարպետը, Հայաստանի Բարձրաշխարհը՝ Արեւելեան Փոքր Ասիա: Ասոր հակառակ նո- րադոյն մատենագրութիւնը՝ Կուբայի, Դեր- բենդի եւ Շամախի շուրջ՝ ուրեմն արեւելեան

* Կը թարգմանենք հեղինակին սոյն կարեւոր գործը Հայկական գորգերու մասին, որ լոյս տեսաւ Միխայիլեան Տպարանէն: Գործիս տիտղոսն է Zdenko Hofrichter, Armenische Teppiche, Wien 1937. Druck und Verlag der Mechitharisten-Buchdruckerei. Գեր- մաներէն ընդգրկն ունի երկու փաստօր գունատիպ եւ տանուհինք միադոյն սեւ տախտակ. Հայերէն թարգմանութիւնը լոյս կը տեսնէ միադոյն տախտակ- ներով. դուրս կը թողունք ժողովրդագրական քարտէսը եւ կը յաւելուէք լուսանկարը վերջին հատուածին մէջ յիշատակուած Հայկական գորգին, որ սեփականու- թիւնն է Վիեննարան Ար. Գեղամ Ամատունիի: Վեր- ջին հատուածս թարգմանած ենք ազատ:

կովկասը կը համարի Հայկական Գորգերու ծագման վայրը: Այս կարծիքը անով կ'ուզէ հաստատել, որ այդ գորգերը մեծ մասով Կուրա վաճառքի կը հանուէին:

Wilhelm Bode իւր հիմնական գործին մէջ՝ Vorderasiatische Knüpfteppiche aus älterer Zeit, 1914, այսպէս կոչուած Հայկական վիշապագորգերու մասին կը գրէ. «Ներկայացուած պատկերներու մէջ յաճախ կը գտնենք նախ՝ Արեւելեան Ասիոյ գեղարանական անասունները: Թէեւ գասոնք զիւրաւ կարելի է մեկնել Պարսիկներու՝ չինական արուեստին ունեցած նախասիրութենէն. բայց հոս անոնք, հակառակ իրենց բարբարոսական դժագրութեան, շատ պայծառ՝ մոնղոլական զինանշանի կենդանիներուն նկարագիրը կը կրեն: Կանգուն վիշապը եւ փրնիկի հետ կոուղ վիշապը՝ Մինդեան կայսրներու զինանշաններուն կոչո նմանահանութիւններն են: Ձինական նախասիրութեան գործածութեան ենթադրութիւնը կը մերժուի անով, որ այս նուիրական կենդանիները ամենեւին առանց հասկացողութեան վերարտադրուած են եւ բացառաբար այնպիսի այրազան տեսակ անասուններու հետ եւ անոնց հետ խառն երեւան կու գան, որոնք Չինաստանի հետ առնչութիւն չունին եւ առաւելապէս Առաջաւոր Ասիոյ հարազատ տիպին կը պատկանին:»

Ճարտնի մէջ կոուղ վիշապին ու փրնիկին պատկերը աչքութեան խորհրդանշան է, Չինաստանի մէջ՝ իշխող տան խորհրդանշանը. տե՛ս John Vinycomb, Fictious and symbolic creatures in art, Chapman & Hall, London, նաեւ De Visser, The dragon in China and Japan, Amsterdam 1913:

Bode առաջին անգամ կարծիքը յայտնեց, թէ Հայկական Գորգերուն վրայ դրուած կենդանիները՝ վիշապներ կը ներկայացնեն. այդ կարծիքը մինչեւ օրս չհերքուեցաւ: Երբ սակայն այդ պատկերները ուշագրութեամբ դիտենք ու օրինակենք, կը համոզուինք թէ վիշապներու հետ գործ չունին, այլ կը նմանին մորթերու կամ տիկերու այն ընտանի անասուններուն, գործնք հայ ժողովուրդը կը պահէր ու կը բուծանէր: Այդ կենդանատիպերը ցանցառ անգամ գլուխ ունին: Տախտակ Բ. կը ներկայացնէ ուրիշ տիկերու ազդակներուն (motive) հետ՝ եղջերաւոր այծ մը (պատկ. a), եւ ճագար մը

(պատկ. c): Պատկեր Եէն պայծառ կը տեսնուի այն չուանը, ուսկից մորթը կամ տիկը, հաւանաբար այծենի մը, կը կախուէր:

Գասական շրջանի պարսկական գորգերու վրայ՝ աւելի բնապաշտ ուղղութեամբ, մեծ մասով ճանաչելի կենդանիները հորիզոնական առանցքի վրայ կը ներկայացուին՝ դրեթէ առանց բացառութեան: Հայկական վիշապագորգ կոչուածներուն կենդանատիպերը դրեթէ միշտ ուղղաձիգ առանցքի վրայ կը պատկերացուին: Տախտակ Բ., պատկ. d, փոքրաթիւ բացառութիւններէն մին է:

Անասուններու մորթերը իբր տիկ Արեւելքի մէջ շատ տեղ՝ գինի, ջուր, կորեկաջուր պահելու կը գործածեն: Վզի ու փորի ձեղքերը կը կարուին, երեք ոտնածայրերը կը կապուին, ու տիկը (պուրնուկ)՝ պատրաստ է արդէն: Անոր մէջ նաեւ կարագ կը պատրաստեն կամ պանիր կը պահեն: Տիկը գետ չչինած՝ մորթերը տան դուրսի կողմը, ստէպ վիշապը մուտքին՝ կը կախեն, չորցնելու համար: Այս տարօրինակ պատկերն է անասարակոյս որ գորգագործներուն ներշնչած է իրենց ներկայացուցած կենդանական ձևերը:


Քանի մը գորգերու վրայ այնպէս իրապաշտ կերպով ներկայացուած են մորթերը, որ մինչեւ իսկ անոնց ծալքերը կ'արտայայտուին հոն. Տախտ. Բ., պատկ. a, b:

Մասնաւոր ուշագրութեան արժանի են յաճախակի ներկայացուած խայտաւոր մորթերը: Կենդանի անասուններու վրայ առաւել կամ նուազ մեղմ եղբրուած կ'երեւան այդ խայտուցները, բայց գորգերու վրայ՝ հանդուցելու արուեստին համաձայն գորաւոր եղբրաւորում կը ստանան: Ոճաւորուելով (stylisé)՝ կ'ըլլան ուղղանկիւն, շեղական (losange, Raute), կամ բազմանկիւն:

Ամենահին Հայկական մորթագորգերը Ժ.Ձ. դարու երկրորդ կէսին կը համարուին. արդէն Ժ.Ե. դարուն՝ խայտուցները կը սկսին անհետանալ: Ժ.Ե. դարու վերջը եւ Ժ.Ը. դարու ընթացքին՝ իրապաշտ ներկայացումները կը փոխուին մեծ զարդարանքներու, որոնք չեն խօսիր մարդուն, եւ կը ծառայեն միջոց լեցնելու: Կը կորսնցնեն իրենց նախնական նկարագիրը, եւ չափազանց կը դժուարնայ գանոնք կարգալ, երբ մանաւանդ տերեւագորգերով ու ծաղիկներով, նաեւ փոքրիկ, երկրաչափական ազդակներով կը բերցուին:

Պրոֆ. Jos. Strzygowski իւր գործին մէջ՝ Baukunst der Armenier, հտ. Բ., կու տայ Ժ.Ը. դարէն Հայկական հիւսուածեղէնի մը պատկերը Բուկովինայէն. անոր զարդաձևերը որոշ նմանութիւն կ'ընծայեն Հայկական գոր-

գանիները, բայց հորիզոնական դիրքով: Այս փաստ է թէ Լեհաստան ու Բուկովինա գաղթած 10.000 Հայերու սերունդները շինած են գասոնք եւ իրենց հայրենիքի աւանդութիւնը հաստատուն պահած:




ՏԱՍՏ. Ա. Հայաստան գորգ, Ժ.Ե. դարէն: Ստացող Պր. Գեղամ Ամատունի, Վլիեննա:

դերու անասնամորթերու գրուազին հետ: Ոչ միայն հիւսուածքի վրայ ներկայացուած մորթերը, այլ նաեւ ծաղիկներն ու արմաւաղերները (palmette) յատկանշական խայտուցներ կը կրեն:

Sluckի մէջ գործուած Mazarskiի «Լեհական Գորգ» կոչածներուն վրայ, Ժ.Ը. դարէն, նմանապէս կը տեսնենք այդ խայտաւոր կեն-

Ա. ԽՈՒՄԻ Հայկական Գորգերը ի՞նչ յարաբերութեան մէջ են պարսկական ու կովկասեան գորգերու հետ:

Հայկական գորգերու զարդարուեստին մէջ ազդակներ կը գտնենք, որոնք պարսկական ու կովկասեան գորգերէն առնուած են: Կովկասեան գորգերու զձագրութիւնները



ՏԱԽՏ. Բ.

«Վիշապագորգ» կոչումով հայկական գորգերէն քանի մը անասնամորթեր.
 a) աննաչելի պծենի մը. b) աննաչելի պծենի մը կախելու քելով.
 c) նապաստակի մորթ. d) հաւ բնապաշտ ուղղութեամբ. e) եւ f) աննա-
 չաչելի տիկեր. g) ռնաւորում անասնամորթ՝ ժ.Ը. դարու ազդակներով
 խնդրում:

պարսկական եւ հայկական տարրեր կը բու-
 վանդակեն: Մինչդեռ պարսկական գորգերու
 նմուշներու զարդերը մասամբ չինական ծա-

կան են իրենց հայ ծագման՝ մանրամասն
 զծերովը իսկ, որ դրացի երկիրներու գորգե-
 րուն հետ չէ կարելի շփոթել:



ՏԱԽՏ. Գ.

Աննաչելի մորթագորգերէն մին՝ շուրջ 1600էն. ստացող՝ Österreichisches Museum für Kunst
 und Industrie, վիեննա: Մեծութիւն՝ 452 x 202 cm: Առէջը (Kette) ոչխարի կրկնապատիկ՝
 բնական բուխ կամ սպիտակ բուրդ. քեզանը (Schuß)՝ ոչխարի կրկնապատիկ՝ կարմրիկեկ
 բուրդ. ամէն մէկ հանգուցաշարքին՝ երկու քեզան՝ մին պիւրի, միւսը բոյլ: Բարձրութեան՝
 10 cm-ի վրայ 30 հանգոյց. լայնութեան՝ 10 cm-ի վրայ՝ 55 հանգոյց:

զում ունին: Հայկական եւ անատոլեան
 (փոքր-ասիական) գորգերու միջեւ յիշատա-
 կուելու արժանի աղերս մը չկայ:
 Հայկական հին դասական գորգերը ա-
 ուանց բացառութեան՝ այնպէս նկարագրա-

Ներքին դաշտին զծագրութիւնը կը ներ-
 կայացնէ՝ մեծ, իրար մէջ անցնող շեղական-
 ներու (Raute) գրութիւն մը, ասոնք կը կազ-
 մուին լայն, ատամնաւոր ծապաւններէ՝ զա-
 նազան գոյներով: Շեղականներու մէջ տեղը

կը մասնանշէ մեդալիոն (Medaillon) մը: Վեր ու վար ընթացող ժապաւէններու իրարանցումով կը գոյանան մասնաբաժիններ (Kompartimente), որոնց մէջ դէմ դիմաց շարադասուած են կախուած կենդանամորթեր, ծառեր՝ խորսխանման սաղարթով, կամ չափազանց բարձրադիր, այսպէս ըսելու համար՝ ճնշուած արմաւակերպներ (Palmetten): Հիմքի գծագրութիւնը շարունակեալ կրկնութիւն է՝ չորս ուղղութեամբ (տե՛ս Տախտակ Գ.):

Հայկական Գորգերու քով հիմքի ուրիշ բաժանում չկայ, օրինակ՝ ինչպէս կը տեսնենք «օջախը» կոչուած գորգերու վրայ: Միակ բացառութիւնն է, ցայժմ ծանօթ ժ.Վ. դարու վերագրուած գորգ մը, որուն մասին վերջէն պիտի խօսինք:

Շեղականի այս բաժանումով Հայկական Գորգերը՝ պարսկական թաղարագորգ (Vasenteppich) կոչուածներուն հետ կապ կ'ունենան:

Առաջին խումբի գորգերուն նկարագրական ծանուցիչն է անոնց շրջանակը: Ամենահին գորգերը միայն մէկ տրէզ (եզրագարգ, Borte) ունին: Այդ՝ համեմատութեամբ գորգի մեծութեան՝ շատ նեղ ու խեղճ կերեւայ, ինչպէս նաեւ յետագոյն գորգերու՝ դիտարար ու երկրորդական տրէզներէ բաղկացած շրջանակը:

Տրէզներու գծագրութիւնը յատուկ հայկական չէ, այլ յաճախ պարսկական նախատիպէ մը փոխառութիւն կը յայտնէ: Կոտորած բարունակներ կը բուսնին շեղադիր տերևներէն, եւ փոփոխակի կը պատեն վարդեակներն (Rosette) եւ արմաւակերպները. ասոնցմէ կը բխեն փոխադարձաբար վերէն կամ վարէն՝ գեղարդներ (Partisane). բարունակէն ալ կ'անցնի լայն տերև մը: Ուրիշ տրէզի վրայ կը գտնենք սարակինոսեան շուշանը՝ բեկրեկած շրջագծով եւ փոփոխակի գծագրութեամբ (Տախտ. Գ.): Յաճախապէս է Տի ձեւով տրէզը. ստէպ կը հանդիպինք նաեւ կովկասեան աղբեցութեամբ տրէզներու վրայ:

Հայկական Գորգերու յատակի գծագրութիւնը, ինչպէս ըսինք, պարսկական թաղարագորգերէն անուած է: Նաեւ չինական ծագումով ամպի ազդակը (= չի) հայ գորգագործները պարսիկ դասականներէն ուսած են, անոնց խղճաձեւ գծերը պարզած եւ երբեմն չճանչնալու աստիճան այլափոխած: Պարսկական «բոտան» (Bota)՝ «արմաւենեց

գաղաթը» (Palmwipfel)՝ Հայկական Գորգերու գծագրութեան մէջ շատ ցանցառ կը տեսնուի:

Պարսկական գորգերէն ոմանց վրայ՝ առ հասարակ զոյգ զոյգ փոքրիկ ութանկիւններ կը տեսնուին, որոնք ի մէջ այլոց նաեւ ծառերու եւ նման բոյսերու բուսներ կը ներկայացնեն: Նոյն ութանկիւններուն կը հանդիպինք նաեւ հայկական մորթագորգերու վրայ, բայց հոս անոնք անասուններու ծայրանդամները կը վերջաւորեն:

Շատ նկարագրական է դարմանալիօրէն բարձրադիր՝ երկարաձգուած հայկական արմաւակերպը, որ իւր պարսկական նախատիպէն էապէս կը խոտորի:


Արմաւակերպի նախատիպը չինական լուտասի (lotus) ծաղիկն է. ուրիշ ազդակներու հետ Պարսիկները նաեւ զայն փոխ առած են: Որչափ ատեն որ արմաւակերպը պահեց լուտասի ծաղիկին ճկուն վեհ գծերը, պարսկական գորգերու զրուագին մէջ ամենագեղեցիկ գարգերէն մին էր:

Պարսկական արմաւակերպը զանազան տեսակներ ունի.

- ա. արմաւակերպ մը, որ լուտասի ծաղիկը միջակտուրով կը ներկայացնէ: Ծաղիկին թերթիկները աղնուօրէն ճկուած են. կնիքը թերթիկներէն աւելի բարձ կ'երկարի: Կենդանական դիմակ մը գետեղուած է մէջտեղը. տե՛ս Տախտ. Զ., պատկ. 1:
- բ. Պարզուած արմաւակերպ մը՝ լայն ճկուն թերթիկներով. տ. Տախտ. Զ., պատկ. 2:
- գ. Հարթերես արմաւակերպ մը, որուն մէջտեղը կը գտնուի երբեմն ուրիշ փոքրիկ արմաւակերպ մը՝ ճկուն թերթիկներով. Տախտ. Զ., պատկ. 3:
- դ. Յօդածոյ արմաւակերպ մը՝ հարթ, սուր եզրերուած կամ հարթ, ատամնաւոր թերթիկներով. Տախտ. Զ., պատկ. 4:

Այս վերջին տեսակէն ծագած է հայկական արմաւակերպը, որուն բարձրութեան շեշտաւ գարգացումը մասնաւորապէս աչքի կը զարնէ:

Հայկական Գորգերու յատկանշական են նաեւ շեղականներու ատամնաւոր ժապաւէնները: Հնադոյն կոտորներու վրայ իրապէս նախնական, անճարակ երեւոյթ մ'ունին. աւելի յետագոյն գորգերու վրայ յաճախ զանգուածայինի տպաւորութիւն կ'ընեն: Շեղականներու ժապաւէններուն կ'ընդելուզուին



ՏԱՍՏ. Դ.

Նախորդ գորգին (Տախտ. Գ.) մէկ մասը (իբր 280 cm վերի եզրից մինչեւ մէջտեղը): Գոյները. յատակը՝ կղմխորագոյն կարմիր. մուշ կապոյտ, մուշ կամանչ. մանուշակ, բաց կարմիր, կիտրոնի գոյն՝ գեղին, բուլի սև: Եզրագծերը՝ սև, կարմիր, կապոյտ, կամանչ եւ ճերմակ: Տրէզը՝ փոփոխ շուշան:

ստեպ՝ ուղղաձիգ, բեկբեկած արարեսկներու հիւսկէն մը, որ ծաղկանման ազդակներ կը ցուցնէ. ասոնց մէջ մասնաւորապէս յիշատակուելու են հայկական երեքնուկի կոկոնները: Հայկական պարզ երեքնուկը նոյնպէս յատկանշական է այս գորգերուն:

Ժամանակի ընթացքին մորթագորգերու յիշեալ բոլոր տարրերը կ'այլասերին. նախ կը պարզուին, յետոյ աղօտ կը գծուին, ի վերջոյ անընթեռնի կը դառնան: Գորգագործին կողմէ հասկացողութեան պակաս եւ անկումի նշան պէտք է համարել, երբ նա տիկերու ազդակը (motive) կը քայքայէ ու կը շինէ երկնեանց հարթերեսներ, դորոնք ծաղիկներով, արարեսկներով ու անհասկնալի գծաձևերով կը խճողէ. հմմտ. Տախտ. Բ., պատկ. Գ, ց: Այս գորգերուն մեծ մասը ԺԼ. դարու գործ է:

Մորթագորգերու թուականը չափազանց դժուար է՝ եւ միայն ենթադրարար կարելի է որոշել: Ամէնէն հին՝ մեր ձեռքը հասած մորթագործը (Բերլին, Պետական թանգարան, Իսլամական բաժին)՝ ԺԶ. դարու վերջերը պէտք է գործուած ըլլայ: Naesby-House, Շուեթիա, կայ հայկական գորգ մը, զոր կարելի է 1600ին գործուած համարել: Տախտ. Գ. եւ Դ. գորգերը ԺԼ. դարու կը վերագրուին:

Բ. ԽՈՒՄԲ

ԺԷ. դարու ընթացքին Հայկական Գորգերու երկրորդ խումբ մը զարգացաւ, որ առաջինէն էապէս կը տարբերի անով որ իրեն կը պահին տիկերու ազդակները:

Այս գորգերու ներքին դաշտը, ինչպէս մորթագորգերու քով, բաժնուած է շեղականներու, որոնք «չի»երով բեռնաւոր՝ լայն ժապաւէններէ կազմուած են: Շեղականներու շօշափման կէտերուն, ինչպէս նաեւ ժապաւէններու վրայ՝ հանդուցուած են մեղալիոններ կամ արմաւակերպներ: Անոնց ներքին հարթերեսին վրայ կը տեսնուին դէմ դիմաց՝ մանգաղաձեւ, ատամնաւոր տերեւներ, որոնց նուրբ կոթունները յաճախ չեն համեմատուիր տերեւներու հսկայական մսուտ լայնութեան հետ: Միջոց լեցնելու ամէն տեսակ ազդակներ, ինչպէս արմաւակերպներ, մեղալիոններ, աստղաձողիկներ, ծաղիկներ, ծաղկազարդ արարեսկներ, նաեւ յատկանշական հայկական երեքնուկներ ու անոնց կոկոնները կը շրջապատեն այդ մանգաղաձեւ տերեւները: Կը հանդիպինք դարձեալ ծաղիկ նոր ազդակի մը, զոր փոքրասիական կակաչէն ծագած պէտք է համարել:

Շեղականի ժապաւէնները եւ մանգաղաձեւ տերեւները՝ արարեսկի պարզուած հիւսկէն մը կը ցուցնեն իբր ներքին գծազրուծիւն. ասոր վրայ աստղաձողիկ, խաչածաղիկ ու տերեւներ ցանուած կ'ըլլան:

Գլխաւոր ու երկրորդական տրէզներու գծաձևերը պարսկական նախատիպէ առնուած են: Ներքին դաշտին մեծութիւնը նպաստաւոր չէ համեմատութեամբ չափազանց նեղ տրէզներու թէ՛ Առաջին եւ թէ՛ Երկրորդ Սումբի գորգերուն քով: (Գորգերու մեծութիւնն երբեմն կը համեմատուի 600 cm առ 400 cm):

ԺԸ., ԺԹ. եւ Ի. դարերու հայկական գորգերու զարգարուեստին մէջ՝ աչքի դարնող ազդակ մը կայ՝ որուն ձեւը թաղար (Vase) կը յիշեցնէ եւ առնուած է ԺԷ. դարու պարսկական թաղարագորգ (Vasenteppich) կոչուածներէն: Տախտ. Ե. կը ցուցնէ հայկական գորգ մը՝ թաղարի ազդակով:


Ներքին դաշտի բաժանումը կը համապատասխանէ կրկնակ շեղականներու դրութեան. ասոնցմէ ոմանք «չի»երով բեռնուած լայն ժապաւէններէ կազմուած են, մինչ միւսները նեղ եզերուած են: Մեծ, ատամնաւոր, մանգաղաձեւ տերեւները՝ երկայնութեան նուրբ գծերով երկու անհաւասար, դունաւոր երեսներու բաժնուած են: Գծերուն վրայի աստղաձողիկները քրիստոնէական խաչի ձեւն ունին կարծես: Անկիւնազմով դրուած, բարձրանալու ձգտող փոքրիկ արմաւակերպները գրեթէ ամէն մասով կը նմանին Տախտ. Զ., պատկ. IV. Ը. ի պարսկական արմաւակերպին: Նաեւ այն մեծ, առանձնապէս գեղեցիկ արմաւակերպը, որ երկու մանգաղաձեւ տերեւներու միջեւ շեղակի դրուած է, չափազանց կը նմանի Տախտ. Զ., պատկ. IV. Ը. ի իւր պարսկական նախատիպին: «Զի»ի ձեւով գալարած կեռձանները, որ շեղ, հարթերես արմաւակերպներու մսուտ ծայրերուն կցուած են, նոյնպէս հայկական երեքնուկներն ու անոնց կոկոնները՝ ներքին դաշտը լեցնելու կը ծառայեն: Նեղ, աղքատիկ գլխաւոր տրէզը պարսկական տարրերու ազդեցութիւն կը ցուցնէ:

Գ. ԽՈՒՄԲ

Երրորդ խումբը կը պարփակէ ԺԷ. եւ ԺԹ. դարու այն գորգերը, որոնց ներքին դաշտի գծազրուծիւնը ուղղաձիգ խաբիսի վրայ կառուցուած է: Լայն, բաց կամ փակ

ժապաւէններ իրարու հետ մեծ ութանկիւն մը կը կազմեն. կոշտ, բեկբեկած գծերով եզերուած՝ մանգաղաձեւ տերեւներ ասոնց կ'ընկերանան: Երկայնութեան՝ երկու կողերուն վրայ, միջին խաբիսի զուգահեռ ուղ-

նուկներ ու անոնց կոկոնները, նաեւ աստղաձողիկներ, ութանկիւններ՝ Երբիւք գորգերու ազդակներով, եւ առաջին անգամ ըլլալով՝ կովկասեան նախնական կենդանաձեւեր: Այս գորգին տրէզներն ալ աչքի կը զարնեն



ՏԱԽՏ. Ե.
Հայկական գորգ, 1600էն (խառակոտոր). F. R. Martin:

դութեամբ՝ արմաւակերպներու շարք մը կ'ընթանայ:


Տախտ. Է. կը ներկայացնէ նման գորգ մը. անոր միջին մեղալիոնէն վեր ու վար կը դտնուին մեծ ութանկիւններ, որոնք ճոխ պատկեր մը կը շրջապատեն: Երկայնքի արմաւակերպները գրեթէ միշտ կեռձաններով շրջագծուած են: Միջոց լեցնելու գործածուած են յատկանշական հայկական երեք-

նուկներ, եւ կովկասեան ազդեցութեան նշանները կը կրեն: Երրորդ խումբի գորգերուն թուականը որոշելու համար մեծ նշանակութիւն ունի Լոնդոն գտնուող Գուհարի գորգը: Ներքին դաշտի վերի եզերքին՝ գրութիւն մը կը յայտնէ թէ Գուհար անուն գորգագործ կին մը 1680ին աւարտած է զայն:

Այս գորգի զարգաձեւերուն մէջ մասնաւորապէս ուշադրութիւն կը գրաւեն կմախա-

ձեւ արմաւակերպները, որոնք շրջանակէ զուրկ են, եւ միւս գծապատկերներուն հետ կապ չունին: Ներքին դաշտը կը բաժնեն լայն, ստամաւոր ժապաւէններ, որոնց վրայ յա-

րենն. արարեսկի ճիւղ մը՝ անկիւնադծի ուղղութեամբ գետեղուած է երկ երկու արմաւակերպներու միջեւ: Ճառագայթաձեւ շեղա- կաններու այս գործածութիւնը մինչեւ օրս



ՏԱԽՏ. Զ.

Պարսկական եւ հայկական գորգերէ արմաւակերպներ. I. Արմաւակերպ մը՝ իբր լուստսի ծաղիկ միջակտուրով. մէջ տեղը գետեղուած է անասնա- դիմակ մը: Մանգոլական ազդեցութիւն: II. Պարսկական արմաւակերպ ֆլուր թերթիկներով: III. Պարսկական հարթերես արմաւակերպ մը: IV. Յօդածոյ պարսկական եւ վերակազմուած հայկական արմաւակերպներ ողորկ կամ ստամաւոր թերթիկներով: V. հայկական արմաւակերպներ:

տուկ հայկական են բազմաթիւ երեքնուկներն ու արարեսկիները: Նաեւ խղնջաձեւ «չի» կը տեսնուի հոն: Առանձնապէս գեղեցիկ կ'ազդէ շեղականի գիրքը. չորս արմաւակերպներ, որոնք շեղականի մը հետաւոր տպաւորու- թիւնը կ'ընեն, փոքրիկ ութանկիւնէ մը կը

պահուած է: Միջոց լեցնելու իբր նոր ազդակ կ'աւելնայ շեղանկիւն ծաղիկը. շատ մը փոքր- ասիական եւ կովկասեան գորգերու վրայ կը գտնենք զայն: Խեղճուկ գլխաւոր տրեզի- քները փոքրասիական երանգ կը ցուցնեն (հմմտ. Քըզ-Վէօրտէս):

Դ. ԽՈՒՄԱ

Այս չորրորդ խումբին կը պատկանին ժի. դարու բաւական հազուադիւտ հայկա- կան գորգերը, որոնց շեղականի դրութիւնը

դարաձեւէն առնուած մեծ ազդակի մը կցուած են անկիւնադծի դիրքով՝ երկու բարձրագիւր արմաւակերպներ՝ քաղուած պարսիկ դասա- կան աւանդութենէ: Նաեւ հարթ արմաւա-



ՏԱԽՏ. Է.

Հայկական գորգ ժի. դարէն կովկասեան ազդեցութեամբ: Մեծութիւն՝ 435 X 210 cm: Գոյները՝ յատակը կապոյտ. եզրատերեւները մուր կար- միր. մեղալիոնը սպիտակ. հինգստ ոսկեգոյն դեղին. կանաչ. տժգոյն ծի- րանեգոյն մանուշակ: Գլխաւոր տրեզը՝ սպիտակ, ոսկեգոյն դեղին, ծիրա- նեգոյն մանուշակ, կանաչ եւ բույս կարմիր: Եզրատերեւներու միջեւ կովկասեան կենդանիներ գետեղուած են անմարակ գծագրութեամբ:

չէ կազմուած լայն ժապաւէններէ, այլ ար- տայայտուած է նուրբ երիզներով ուստի դի- րաւ ընթեռնի չէ: Տախտ. Ը. կը ներկայացնէ գորգ մը, որուն ներքին դաշտը՝ երկայնքին՝ նեղ ժա- պաւէններով բաժնուած է: Պարսկական թա-

կերպները պարսիկ դասական ծագում ունին, ինչպէս արմաւակերպի եւ թաղարաձեւի մի- ջեւ՝ մեղալիոնը: Հետաքրքրական են ուղ- դաղիձ, երկրաչափական տիզազլուխները, որոնք պարսկական «Հերազի» նմուշներէն զարգացած են: Անոնց կարծր դիժերը սակայն

Հայկական են: Հայկական են նաև երեքնուկն ու անոր կողմը, խայտաուր ծաղիկները եւ մեծ, հարթերես արմաւակերպները: Միջոց լեցնելու նոր ազդակներ են՝ արջամագլիփ փոքրիկ ատամնաւոր տերեւները, որոնք եւրոպական ականթի տերեւներուն հետ նոյն են եւ նաև լեհական Գորգերու վրայ ստէպ կ'երեւան: Գլխաւոր ու երկրորդական արէզներու գծագրութիւնը պարսկական նախատիպերու վրայէն կերտուած է: Բեկբեկած ալիքաւոր բարունակ մը կ'անցնի տերեւներու մէջէն, որոնք կարծես նոճուոյ տերեւ են. ասոնց միջեւ զետեղուած են փոփոխակի՝ արմաւակերպ մը եւ շեղականաձեւ վարդեակ մը (Rosette): Նման արէզներ կը գտնենք նաև ձուշեգանի գորգերուն վրայ:

Առէջը բամբակ է, եւ ասով կը տարբերի նախորդ գորգերէն, որոնց ամէնուն ալ հիմքը ոչխարի անխառն բուրդ էր:

Շահ Աբբաս (1557—1628) ամբողջ երկիրն ու Երեւանի եւ Դաւրէժի միջեւ գիւղերը կործանել տուաւ, որպէս զի մերձեցող թուրք բանակը ապրուստէ զրկէ եւ անոր յառաջ-խաղացումը խափանէ: Աւերուած չրջանի բնակչութիւնը՝ 27.000 հայ ընտանիք Պարսկաստան փոխադրեց եւ հրամայեց՝ տէրութեան գանազան գաւառներուն մէջ գաղութներ հաստատել: Հայ գաղթականները հաստատուեցան նաև Սպահանի դիմաց՝ Սէնդէ-Րուզ գետին աջ ափը, որ Պարսիկներու նուիրական վայր մըն էր, եւ այլազաւաններու արգիւրուած էր մերձենալ: Այդ գաղթաւայրը կոչեցին Հայերը՝ ի յիշատակ իրենց հայրենի քաղաքին՝ Նոր-Ջուղա (տե՛ս John-Bapt. Tavernier's Vierzig-Jährige Reise-Beschreibung, Nürnberg 1681): Նոր-Ջուղա այսօր դեռ իւր գոյութիւնը կը պահէ:

Պէտք ենք ընդունիլ, որ ականթի տերեւը Շահ Աբբասէն արքունիք կանչուած եւրոպացի արուեստաւորներու ձեռքով աւելեւեան գորգերու զարդերուն մէջ մտած է:

Տախտ. Թ. կը ներկայացնէ գորգ մը, որ Սպահան շինուած պիտի ըլլայ 1600էն յետոյ: Անոր ներքին դաշտի գծագրութեան հիմքը կը կազմէ Հերազի նմուշին՝ շեղականի դրութիւնը՝ յաւիտենական կրկնութեամբ: Հարթերես արմաւակերպներուն հետ՝ ատամնաւոր, երկյարկեան, մանգաղաձեւ տերեւները գծագրութեան մէջ տիրող դեր կը կատարեն: Միջոց լեցնելու կը ծառայեն մեծ եւ պղտիկ աստղաձաղիկներ եւ խաչաձաղիկներ: Երեք-

նուկն ու կողմը կը պակսին, բայց փոքր-ասիական կակաչը կը գտնուի հոն: Աչքը կը զարնէ կենդրոնի շեղականին մէջ՝ խաչը: Նեղ արէզին գծագրութիւնը կը ներկայացնէ բեկբեկած բարունակ մը, որ ծանրամարմին, տերեւաձեւ արմաւակերպներ կը պատէ:

Ե. ԽՈՒՄԲ

Հինգերորդ խումբը կը կազմեն այն զարմանալի գորգերը, զոր մատենագրութիւնը «ծառագորգեր» կ'անուանէ: Ասոնց գծաձեւերու համադրութիւնը պարսկական մեգալիոն-գորգերէն ծագած է:

Ներքին դաշտի գծագրութիւնը կը ներկայացնէ ծառի ճիւղեր դէմ դիմաց. անոնք զոյգ զոյգ փոփոխակի վեր ու վար ուղղուած են: Չորսական ճիւղեր անկանոն չրջանակ մը կ'եղերեն: Ասոնցմէ կը բուսնին հինայի ծաղիկներ, տերեւներ կամ նուա յիշեցնող պտուղներ: Լայն, նաև երկրորդական արէզները պարսկական նկարազիր կը կրեն:


Այս գորգերու վարի հիւսուածքը բամբակ է:

Պահուած ամենահին ծառագորգը պիտի ըլլայ ԺԷ. դարու սիլիգրէն (Տախտ. Ժ.): Այս խումբին նորագոյն գորգերը, որոնք չուրջ ԺԷ. դարու վերջը կամ ԺԸ. դարու ընթացքին գործուած են, հիներէն կը տարբերին ճիւղերու նուրբ գծաւորումով եւ նեղ արէզներով: Ասոնց զարդերուն մէջ կը տեսնենք հինայ ծաղիկը, բարձրադիր արմաւակերպներ, երեքնուկներ եւ յողածոյ շեղականներ, որոնցմէ կը ցցուին չափազանց մեծ՝ մանգաղաձեւ տերեւներ: Նաև հարազատ հայկական որդան կարմիրը գործածութիւն գտած է հոս:

Զ. ԽՈՒՄԲ

Վեցերորդ խումբին կը վերաբերին ԺԷ. եւ ԺԸ. դարերու այն գորգերը, որոնց ներքնաղաչոր կը ծածկեն մեծ արմաւակերպներ՝ քով քովի կամ վրայէ վրայ:

Տախտ. ԺԱ. կը ներկայացնէ այդպիսի գորգ մը, որուն նուրբ երկնքերով արմաւակերպները՝ շեղականներու անորոշ հիւսկէն մը կը կազմեն: Արմաւակերպները, մեղալիոնի ձեւով զարդագծերը, մանաւանդ միջոց լեցնելու զարդերը՝ մասամբ այնպէս այլափոխուած են, որ դիւրին չէ գանոնք ճանչնալ: Որդան կարմիրը փոքր չափով միայն գործածուած է: Նեղ արէզի գծագրութիւնը կրկնական տարրեր կը բովանդակեն: Տախտ. ԺԲ.



ՏԱՍՏ. Ը.

Հայկական գորգ ԺԷ. դարու առաջին կեսին, շինուած Խաւնաբար Նոր-Ջուղա: Ստացող՝ Österreichisches Museum für Kunst und Industrie, Վիեննա: Մեծութիւն 465 x 195 cm: Առէջը մերմակ բուրդէ բիլ. իւրաքանչիւր հանգուցաւարքին՝ երկու բեգան: Հանգուցները ոչխարի բուրդէ. 10 cm բարձրութեան վրայ՝ 33 հանգուց. 10 cm լայնութեան վրայ՝ 32 հանգուց: Գոյները՝ յատակը մուր կլմնորագոյն կարմիր. կապոյտ, բաց կապոյտ, բայց դեղին, մանուշակ, բույս սև եւ մերմակ:

կու տայ շատ տարօրինակ գորգ մը, որուն երկայնութիւնը 244 cm է, մինչ լայնութիւնը միայն 52 cm:

Ներքին դաշտի ուղղաձիգ խարխուխին վրայ երեք արմաւակերպներ կան, որոնց իւրաքանչիւրը երկու նեղ, ճանկաւոր, տեւեւածեւ արմաւակերպներէ պաշարուած է: Միջոցը վայելչապէս լեցուած է զարդերով. զարդագծերու համադրութիւնը՝ ամբողջական տպաւորութիւն կ'ընէ. այս աւելի նուազ խճողուած է քան ուրիշ շատ հայկական գորգեր: Միջին ու կողմնակի արմաւակերպներու ներքին զարդարանքը հայկական չէ. բաց ի երեքնուկէն միւս բոլոր միջոց լեցնելու զարդերը կովկասեան են:

Որդան կարմիր չէ գործածուած: Աղքատիկ տրէզը՝ բեկբեկած, կրկնակ ընդելուզուած բարունակ մը կը ցուցնէ, որ ամէն երկու հատման կէտին՝ սողոմոնեան աստղ մ'ունի:

է. ԽՈՒՄԲ

Եօթներորդ խումբին տակ կ'երթան այն գորգերը, որոնց Orendi շատ յարմար յորջորջում մը գտած է՝ «Պառնածին գորգեր» (Bastard-Teppiche): Ծատ յաճախ կը հանդիպին ասոնք Կովկասի մէջ, քիչ անգամ Բերգամայեան գորգերու շարքին: Բերգամա կուումը կը ծագի նոյնանուն փոքրիկ քաղաքէն, ուր սոյն գորգերը վաճառքի կը հանուէին: Անոնց յառաջագայութեան վայրը կը հասնի մինչեւ Հայկական Բարձրագաւառը՝ Արեւելեան Փոքր Ասիա: Կովկասեան լեռնաշղթայէն հարաւ, Կուր գետի երկու ափերուն վրայ կը տարածուի հողամաս մը, որուն բնակչութեան կարեւոր մէկ զանգուածը կը կազմեն Հայերը: Այդ գաւառի գորգագործները սեփական ու օտար ազգակներ կիրարկած են, այդպէս յառաջ եկած են «Պառնածին գորգերը»: Նոյն է նաեւ խառնածին Բերգամայեան գորգերու ծագումը:

Գլխաւորաբար ԺԼ. եւ ԺԹ. դարերուն՝ խառնածին գորգերը աւելի լայն գետնի վրայ՝ մեծաքանակ արտադրուած են: Կարելի է երեք ենթախումբերու բաժնել զանոնք:

Գորգեր՝

1. գերակշիռ հայկական նկարագրով.
2. գերակշիռ կովկասեան նկարագրով.
3. տկար հայկական երանգով:

ա. ենթախումբ:

Տախտ. ԺԳ. ի վրայ ներկայացուած գորգը կը պատկանի հաւանաբար ԺԼ. դարու, եւ

Գ. խումբի գորգերուն հետ սերտ աղերսի մէջ է: Անոր գծաձեւերը վերջին գորգիս (Տախտ. ԺԲ.) շատ մերձ են:

Ներքին դաշտի գծազրուծիւնը հոս եւս երկու համաչափ կէսերու բաժնուած է. կանգուն, ատամնաւոր արմաւակերպներուն կ'ընկերանան մանգաղածեւ տերեւներ: Արմաւակերպներու եւ տերեւներու մէջ զետեղուած է հայկական եւ կովկասեան արարեսկներու խառնուրդ մը: Մինչդեռ ներքին դաշտի զարդերուն մէջ կ'ընկնեն հայկական ազգակներ, տրէզի գծազրուծիւնը շեշտաւ կովկասեան է:


բ. ենթախումբ:

Heinrich Jacoby իւր «Eine Sammlung orientalischer Teppiche», Berlin 1932 (Տախտ. XIV) գործին մէջ կը հրատարակէ պատկերը գորգի մը, զոր կարելի է ցուցնել թէ Կուրայէն է՝ հաւանաբար ԺԹ. դարէն: Նիհար, ատամնաւոր, երկարադիր արմաւակերպները եւ զանոնք չըջապատող՝ մանգաղածեւ տերեւները հայկական ազգեցութեան կը վկայեն: Տերեւներու ներքին գծազրուծիւնը հայկական է. արմաւակերպները կովկասեան են: Միջոց լեցնելու գործածուած ազգակները, բաց ի երեքնուկէն, նոյնպէս կովկասեան են: Ներքին դաշտի թէ՛ վերի շարքին եւ թէ՛ մէջտեղը կը տեսնենք այն տեսակ մեղալիտներ, որոնք Շիրվանի գորգերուն վրայ կ'երեւանանոնց ներքին գծազարդերուն մէջ կը գտնենք կակաչը՝ իբր փոքրասիական փոխառութիւն: Տրէզը աչքառու կերպով լայն է. անոր գրուադները ամենեւին հայկական չեն. մէկ գլխաւոր ու չորս երկրորդական տրէզներ կան: Գլխաւոր տրէզի զարդագծերը բոլորովին փոքրասիական տարրերէ կազմուած են: Ոճաւորուած մեխակը կարելի է որոշակի ճանչնալ:

գ. ենթախումբ:

Կովկասեան շատ գորգեր, որոնք Կէնճէ անունով ծանօթ են, որովհետեւ Գանձակի (Կէնճէ) մէջ կը վաճառուին՝ շատ փոքր չափով միայն հայկական ազգեցութիւն կը ցուցնեն:

Տախտ. ԺԵ. կը ներկայացնէ Կէնճէ գորգի մը ներքին դաշտի զարդագծերը շեղականներու ամբողջիւր բաղադրութեամբ: Եղականները կը պատեն արմաւակերպները, որոնց հայկական ծագումը դժուարաւ կը ճանչցուի:



ՏԱԽՏ. Թ.

Հայկական գորգ, ԺԵ. դարու ստաջին քաղաքէն, հաւանաբար Նոր-Ջուղա շինուած: Ստացող՝ Österreichisches Museum für Kunst und Industrie, վիեննա: Մեծութիւն՝ 379 X 207 cm. Առէջ՝ բամբակի ենգապատիկ բել: Թեգանը՝ մերմակ բամբակ. իւրաքանչիւր հանգուցաշարքին՝ երկու բեգան: Հանգուցները՝ ոչխարի բուրդէ կրկին բել. 10 cm բարձրութեան վրայ 34 հանգուց. 10 cm լայնութեամբ վրայ 41 հանգուց: Գոյները՝ կարմիր յաւառակ. բաց կապոյտ, մուր կապոյտ, մանուշակ, բուխ, դեղին, բուխ կանաչ, մերմակ: Տրէզը՝ կապոյտ-կանաչ յաւառակ, բուխ բարունակներ դեղին շրջանակներով:

Ը. ԽՈՒՄԲ

Այս խումբին կը վերաբերին այն գորգերը, որոնք ժԹ. դարու կէսէն առդին, եւ Ի. դարուն՝ Հայաստան, մեծ մասով Երեւանի մէջն ու շուրջը՝ գործուած են, ինչպէս ցուցուած է:

Այսօր հրապարակի վրայ գտնուող Երեւանեան գորգերու գծադրութիւնը՝ ժԻ. դարու դիպակներու նմուշներուն հետ կապ ունի: Տախտ. ժԶ. գեղեցիկ օրինակ մըն է ժԹ. դարու կէսի՝ հայ ժողովրդական արուեստին: Հայկական մեծ արմաւակերպները այնպէս սաստիկ քայքայած են, որ դժուարաւ ընթեռնլի են այլ եւս: Միջոց լեցնելու դարգերուն մէջ կովկասեան տարրը գերակշիռ է. «չի»ի ազդակները փոխուած ու գրեթէ խաճածադիկներու ձեւն առած են:

Այսօր Երեւանի, Մարտունիի, Քարաքիլիսայի եւ Նոր Սեբաստիոյ մէջ գորգաշինարաններ կան՝ Սորհրդային Միութեան մէջ կառավարութեան մենավաճառի վերածուած, ուր նաեւ հին մորթագորգեր կ'օրինակուին: Այս դասական գորգերը վարպետօրէն կը կեղծեն Պարիսի եւ Բուզարէստի մէջ:

2.

Սուզարկուններէն ոմանք կը հաստատեն թէ հին հայերէն ձեռագիրներու մանրանկարչութեան եւ հայկական գորգերու դարգարուեստին միջեւ կապեր կան. ուրիշներ կը մերժեն նման ամէն աղերս:

Հայ Եկեղեցւոյ ձեռքը կը գտնուին մօտ 17-000 մեծ մասով նկարազարդ ձեռագիրներ՝ կրօնական բովանդակութեամբ, որոնք մշակութային ամենաթանկագին հարստութիւնը կը կազմեն բոլոր երկրամասերու վրայ ցրուած հայութեան: Ձեռագիրներն են Աւետարաններ, Վկայաբանութիւններ, Ճաշոցներ, Ճառնատիրներ, Սաղմոսարաններ, Տօմարներ, Ժամագիրքներ, Մաշտոցներ եւն:

Մխիթարեան Մխարանութիւնը ի Վիեննա միայն ունի մշակութային պատմութեան համար արտակարգ արժէքով իւր հաւաքածոյին մէջ՝ իբր 1500 հայերէն ձեռագիր:

Արեւելեան ծէսն ու արուեստը ամէնէն աւելի աւանդապահ է. պաշտամունքի սպասներուն զրուագները դարեր շարունակ անփոփոխ պահուած են: Եթէ ժԱ. դարէն ձեռագիր մը համեմատենք ժԸ. դարու ձեռագրի մը հետ, էական տարբերութիւն պիտի գտնենք զբնութեան, բայց ո՛չ մանրանկարչական ոճին մէջ: Նկարչները եօթը դար շարունակ օրինակած են իրենց նախորդներուն գործերը, իրենց գործին առանց ունէ նորութիւն մ'աւելցնելու:

Մխիթարեանց հաւաքածոյին մէջ ի Վիեննա հայերէն մանրանկարուած ձեռագիր մը կայ ժԱ. դարէն, որ ոչ միայն բիւզանդական ազդեցութիւն կը ցուցնէ, այլ նաեւ արդէն պարսկական նախատիպերու կախում կը յայտնէ:

Իբրեւ ամենակարեւոր տարր՝ հայ նկարչները նախ փոխ առած են պարսկական արաբեակը:


Երբ պարսկական երկրթակ տերեւ մը՝ երկայնքին կոր դժով կտրենք՝ ձեւ մը կը ստանանք, որ միջինդարեան դէնք մը՝ տէգ (Partisane) կը յիշեցնէ. հայկ. գորգերու զրուագին մէջ յաճախազէպ այս ազդակը այդպէս ալ կը կոչուի մատենագրութեան մէջ: Հայերէն ձեռագիրներու մանրանկարչները, մանաւանդ լուսանցազարդերը կը ցուցնեն այդ տէգը, որ դարէ դար մեծ փոփոխութիւններ կը կրէ:

Պարսկական «բողան» (Bota) հայերէն ձեռագիրներուն մէջ մուտք գործած է, բայց աւելի ցանցառ կ'երեւայ քան տէգը: Յաճախազէպ աստղածաղիկները պարսկական հինայի հետ նոյն պիտի ըլլան: Կ'երեւայ թէ այս յիշուած պարսկական տարրերն են միայն, զորոնք հայ մանրանկարչները փոխ առած են:

F. Macler իւր «Documents d'art arméniens», Paris 1924, գործին մէջ հայկական սիւնի բուն մը կը հրատարակէ, որ բաց ի ուրիշ զարդագծերէ՝ խորսխանման զարդ մ'եւս կը կրէ: Այդ խորսխի ազդակը կը տեսնուի նաեւ հայկական գորգերու գծագրութեան մէջ. 1603էն հայերէն ձեռագիր մը (Մխիթարեան Մատենադարան, Վիեննա) նոյն ձեւով ծառ մը կը ներկայացնէ:

Երեքնուկն ու անոր կոկոնը ձեռագիրներու նկարներուն մէջ ալ ստէպ կ'երեւան՝ շատ փոխուած, այնպէս որ կարելի չէ միշտ ստուգութեամբ ճանչնալ: Մանրանկարները փոքրասիական ազդեցութիւն չեն ցուցներ, կայ սակայն յաճախ կրկնուող ծաղիկ մը, որ թերեւս փոքրասիական մեխակէն ծագած ըլլայ:

Նկարուած կենդանիները, մանաւանդ սկզբնագիրներու մէջ ո՛չ մորթագորգերու պատկերներուն, ո՛չ կովկասեան գորգերու կենդանական ազդակներու հետ աղերս ունին:



SUS. Ժ.

Հայկական «ծառագորգ», մերձաւորապէս 1600էն, ըստ F. R. Martini, A history of oriental carpets before 1800. Bode գորգս հնաճի (archaisch) կ'անուանէ. պիլի արմաւակերպները հայկական, մասնաբաժինները լեցնող ծառերը՝ հնագոյն նկարագիր ունին: Գոյները՝ բույ կապոյտ յատակ. բաց դեղին (crémegelb), մերմակ, կարմիր, կանաչ, բաց կապոյտ եւ ծիրանեղոյն մանուշակ: Bode ոչ մէկ նկարի մէջ ծառագորգի մը պատկերը գտած է:



SUS. ԺԱ.

Հայկական արմաւակերպ գորգ ժԻ. դարէն: Ստացող՝ Österreichisches Museum für Kunst und Industrie, Վիեննա: Մեծութիւն՝ 298 x 167 cm: Առէ՛՛ մերմակ, բամբակէ ֆառապատիկ քիլ: Թեզանք՝ մերմակ, հոսպատիկ բամբակէ քիլ. իւրաքանչիւր համգուցաշարքին երկու քեզան: Հանգոյցները՝ ոչխարի կրկնապատիկ բուրդ: 10 cm բարձրութեան վրայ 46 հանգոյց. 10 cm լայնութեան վրայ 41 հանգոյց: Գոյները՝ յատակը մուր կապոյտ, կզմտրոգոյն կարմիր, դեղին, բույ մանուշակ, բաց քիւսագոյն, բաց կապոյտ, մուր կանաչ, կանաչ. բաց քիւսագոյն դեղին տրեզին մէջ:



ՏԱԽՏ. ԺԲ.

Հայկական արմատակերպ գորգ, ԺԲ. դար: Ստացող՝ Österreichisches Museum für Kunst und Industrie, վիեննա: Մեծուքիւն՝ 244 × 52 cm: Գոյները՝ աղտոտ դեղին յատակ. միջակ կապոյտ, կարմիր, ներմակ. տրեզը՝ բուխ:



ՏԱԽՏ. ԺԳ.

Հայկական արմատակերպ գորգ (ԺԲ. դարու վերջին). մեծուքիւն՝ 260 × 132 cm: Գոյները՝ կարմիր յատակ. միջակ կապոյտ, դեղին, կանանչ, ծիրանեգոյն մանուշակ եւ ներմակ. տրեզը՝ կովկասեան:



ՏԱԽՏ. ԺԴ.

Յայտնապէս հայկական ազդեցութեամբ գորգ մը կէննէյէն (Գանձակ), մերձաւորապէս 1860էն: Մեծուքիւն՝ 255 × 163 cm. Ատէչն ու բեզանը՝ բուխ ներմակ ոչխարի բուրդէ հոսպատիկ դերձան. իւրաքանչիւր հանգուցաշարքին բեզան մը: Երկայնութեան եզրը կը կազմեն չորս ատէչի բեղեր. Արտաքին երկու ատէչի բեղերը տեղ տեղ գունաւոր ուսրուած են: 10 cm բարձրութեան վրայ 30 հանգոյց, 10 cm լայնութեան վրայ 23 հանգոյց: Գոյները՝ կղմնորագոյն կարմիր յատակ. միջակ կապոյտ, դեղին, կանանչ, ծիրանեգոյն մանուշակ եւ ներմակ:



ՏԱԽՏ. ԺԵ.

Մերձարապէս 1880էն գորգ մը գործուած ի կէննէ, նկարագրական, շատ պարզուած հայկական արմատակերպներով՝ պարզ շեղականի շրջանակին մէջ: Մեծութիւն՝ 180 x 120 cm: Առէչը՝ ներմակ, բեզանը՝ կարմիր ոչխարի բուրդէ: 10 cm բարձրութեան վրայ 25 համգոյց: Գոյները՝ սպիտակ, դեղին, յառակաւ, բաց կապոյտ, բաց կանաչ, ծիրանագոյն մանուշակ, միջակ կարմիր եւ ներմակ: Տրէզը՝ կովկասեան, նման գոյներով:



ՏԱԽՏ. ԺԶ.

Հայկական գորգ, ժԹ. դարէն. մեծութիւն՝ 280 x 170 cm: Առէչն ու բեզանը՝ ներմակ, ոչխարի եռապատիկ բուրդ: Ներքնադատին մէջ՝ կովկասեան ուրիշ ազգակներուն հետ, որոնք տեղ լեցնելու կը ծառայեն, կ'երևան նախնական կովկասեան ներկայացումներ ընտանի անասուններու: Գոյները՝ հինգած սպիտակ, դեղին, յառակաւ, բաց կապոյտ, մուր կապոյտ եւ ներմակ:

Հայրենիքէ զրկուած Հայերը միշտ հաւատարմօրէն փառած են իրենց կրօնին ու լեզուին: Գորգագործները՝ իբր ջերմ հաւատացեալներ, խուսափած են մանրանկարներու երկիրներու հետ յարաբերութեան մէջ կը մտնէին եւ անոնցմէ նոր ներշնչումներ կը ստանային:

Դժուար թէ կարելի ըլլայ հայկական գորգը երկիրներու հետ յարաբերութեան մէջ կը մտնէին եւ անոնցմէ նոր ներշնչումներ կը ստանային:



ՏԱԽՏ. ԺԷ.

Հայկական գորգ, Երևան 1934. Ստացող՝ եղբարք Յակոբեան, Վիեննա: Մեծութիւն՝ 174 x 124 cm: Առէչն ու բեզանը՝ եռապատիկ, բուս ոչխարի բուրդ. իրաքանչիւր համգոյցաշարքին բեզան մը: 10 cm լայնութեան վրայ 34 համգոյց. 10 cm բարձրութեան վրայ 42 համգոյց: Լայնութեան կողմէն երկու առէչի բեշ՝ կարմիր եզերուած: Գոյները՝ բաց մանուշակ յառակաւ, բաց կապոյտ, մուր կապոյտ, մուր կարմիր, նարնջագոյն կարմիր, դեղին, մուր դեղին եւ կանաչ: Գլխաւոր ազգակները յառաջ կու գան քաղաքաճեւերէն:

րու կրօնական ազգակները, որ բաց աստի իրենց զիւրամատչելի պիտի չըլլային, իրենց զօրգերուն մէջ հիւսելէ: Կը վախնային որ կոտորուելով անոնց նուիրականութեան դէմ մեղանչեն: Մինչ խիստ աւանդապահ մանրանկարիչները իրենց նստակեաց կոչումը կը գործադրէին, գորգագործները՝ զրացի ու

զերու եւ հայերէն ձեռագիրներու մանրանկարչութեան միջեւ աւելի քան մակերեսային ազերս մ'ապացուցանել:

3.

Ծանօթ է, թէ Արարները չունին սեփական արուեստ մը՝ ժողովուրդի ծոցին մէջ գոյացած. անոնք իրենց գեղարուեստական

ներչնչունները կը պարտին պարտեալ ազգե-
րու: Այդ է պատճառը, որ արաբական գե-
ղարուեստի արտադրութիւնները Սպանիայէն
մինչեւ Հնդկաստան՝ չունին ոճի միասնակա-
նութիւն:

Միհրապի ազգակն ու արուեստը՝ բիւ-
զանդական ծագում ունի. եռամաս աղեղը՝
բասիլիկացի միջակտուրին կը համապատաս-
խանէ. ուստի նամազի գորգին կարեւոր
տարրերը քրիստոնէական ծագում ունին:

Մինչեւ հիմայ ծանօթ է մէկ հայկական
գորգ միայն՝ միհրապի գորգագուլ, զոր Alois
Riegl ընդարձակ կը նկարագրէ իւր գործին
մէջ՝ «Ein orientalischer Teppich vom Jahre
1212 n. Chr.», հրատ. G. Siemens, Berlin:

Այս շահեկան կտորը եզակի գիւղ
մ'ունի բոլոր հայկական գորգերու մէջ: Ներ-
քին դաշտը կը ներկայացնէ խորշ մը՝ երեք
բաժանումով, սիններու վրայ. զայն կ'ըզերէ
հայերէն յիշատակագիր մը տ. Տախտ. Ա.:

Ներքին դաշտի գծագրութիւնը ժէ. դա-
րու կը պատկանի. գլխաւոր տրէզի ծաղկա-
զծերուն մէջ վարդեակներու հետ կը տես-
նուին մեխակի եւ յակինթի ազգակներ՝ այլա-
սերման ենթակայ գորգերէ: Տրէզը ժէ. դա-
րու կիսուն անկման շրջանի գրոշմ կը կրէ:

Յիշատակագիրը խանդարած կամ պակաս
աստուր ու սխալաշատ բնագիր մը կը ներ-
կայացնէ. Հ. Գ. Գալէմբեարեան կը վերա-
կազմէ ու կը թարգմանէ ենթադրաբար.
«Դրան արկանելի ամենասուրբ տաճարին.
Յիշատակ Հոփսիմէի տան. 651 տարւոյն.
ես արուեստագէտս զայս գործեցի» (այր-
գեւեցի): (Riegl, Ein orient. Teppich,
էջ 9):

Ինչպէս կը տեսնուի, գորգագործը ան-
զրագէտ մէկն է. գրեթէ յաճախ յապաւած
կամ այրածեւած է:

Երբ գիտենք գորգի գրուագները, արուած
թուականին հետ ուղղակի հակասութեան մէջ
կը մտնենք. եւ կը ստիպուինք հարցնել թէ
արդեօք արուեստագէտը սխալած չէ: Բնա-
զրին խօսքը «յիշատակ Հոփսիմէ տն ՈՄԱ.
թիւին» հայկական թուական համարելով պիտի
նշանակէ 1202. բայց կրնայ Քրիստոսի թուա-
կանն ալ ըլլալ. արդ պիտի ենթադրենք որ
արուեստագէտը գուրս ձգած է Ռ. թիւը՝

սխալմամբ թէ առանց հասկացողութեան, եւ
պիտի ունենանք 1651 թուականը. այն ատեն
զարդն ու թուականը կը համաձայնին*:

1202 տարիէն գորգագործ մը չի կրնար
երբեք ժէ. դարու արուեստով բանիլ:

Թարգմ. Հ. Պ. Է.



Ծ Ա Ն Օ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Գ
Ս Տ Ա Մ Պ Օ Լ Ո Յ Պ Ը Տ Մ Ո Ւ Թ Ե Ը
Ե Ր Ե Մ Ի Ա Չ Է Լ Ե Պ Ի Ի Ք Ե Օ Մ Ի Ի Ր Ը Ե Ա Ն

(Շարունակութիւն եւ վերջ):

Գ. Լ. Ու. Ե. Ը.

Երեմիա իր Պատյտին այս Գլուխը ամ-
բողջովին կ'ուղղէ իւր հիւր Վարդապետին,
եւ առաջին չորս սողովը ներողութիւն կը
խնդրէ անկէ ըսելով.

- Տող 1. «Ո՛վ տէր վարդապետ իմ ճան
չըրջելոյ եղեւ արդ վախճան.
- Տող 2. Ըստ կարեացս եւ մի՛ մեղադրել՝
Այս եւեթ հակիրճ գրեցան:
- Տող 3. Ծանի՛ր զի այսք ընդ բոլոր՝
Արտաքոյ պարսպիս տեսան.
- Տող 4. Զի դժէջ քաղաքին թողաք՝
Մեզ շատ է ասել արդ զայնքան»:

Այսինքն՝ ո՛վ Տէր Վարդապետդ իմ հո-
գիս, ահա մեր շրջագայութիւնը վերջացաւ,
կ'ըսէ, կը խնդրեմ որ ինձ մեղադիր չըլլաս.
կարողութեանս ներածին չափ այսքան մը
համառօտ կերպով գրած ըլլալուս, եւ գիտ-
ցի՛ր որ այս նկարագրածներս բոլորն ալ քա-
ղաքին պարիսպէն դուրսը տեսնուածներուն
կը վերաբերին, մէջը եղածներուն մասին
բան մը չգրեցի, զի պատմուածներն ալ բա-
ւական շատ եւ երկար եղան:

Տրդ սողէն սկսած մինչեւ տ. 49 կը
յայտնէ թէ արքունիքին եւ պալատին խել մը
սովորութիւններուն վրայ չէ խօսած, ոչ ալ՝

* Աւելի հաւանական է ուրիշ մեկնութիւն մը որ
հայ գրչարուեստի վրայ կը յենու: Փոխանակ ենթա-
դրելու, որ գորգագործը Ռ. գիրը գուրս թողուցած է,
պէտք է ՈՄԱ կարգաւ ՌՄԱ (= 1602), որ մեծ տարբե-
րութիւն մը չունի հեղինակի վերականգնել ուզած
թուականին: Ո եւ Ռ գրերու շփոթութիւնը գիւրս-
հասկնալի է, եւ թերեւս գորգն ալ Ռ կը կրէ:
Թարգմ.:

թէ արքային քովը մտնող ելլող պաշտօ-
նեաները ի՞նչպէս են, սպասաւորները ի՞նչ-
պէս կը ծառայեն եւայլն, Եհնիշէրի, Պօս-
տաննի պաշի եւ Սեպախի կոչուած զինուոր-
ներու խումբը նկատի չէ առած, եւ կը յա-
ւելու՝ թէ տաճիկներու պատերազմները եւ
զրաւած քաղաքները նիւթ չ'առներ իրեն, եւ
չէ ուղած նկարագրել թագաւորական պար-
տէզ-բուրաստանները, զահը, պալատը եւ
քաղաքը շրջապատող ծովերը ու ցամաքը եր-
կարող գեղատեսիլ ծովածոցները, որոնց
Եւրոպացիները աչք ունին շարունակ:

Երկրին արտադրած բերքերը, պտուղ-
ները, ձուկերն եւ վաճառականութիւնը, ա-
ռուտուրը չի նշանակեր, ո՛չ ալ շէնքերը,
սրբազանները, մզկիթները եւ մզկիթի վերա-
ծուած յունական եկեղեցիները. չ'ուզեր իսկ
խօսիլ զպրոցներու վրայ եւ այս առթիւ կ'ար-
ձանագրէ հետեւեալ տխրալից՝ բայց նշանա-
կալից սողերը.

- Տող 50. «Ոչ մէքթէպից հայեցաք՝
Ընդ որ զմանկունն է մարգունն սան:
- Տող 51. Մեզ ո՛չ մէտրէսէք պիտոյք՝
Քանդի մերս՝ որ խափանեցան,
- Տող 52. Յու է մեզ զայլոց դիտել՝
Անպուլս աղք մեր՝ անիւխան»:

Ակնարկ իսկ չ'ենեցի՝ կ'ըսէ, մէքթէպ-
ներուն (զպրոց) վրայ ուր սողաք կը թուլան
առնելու կը խրկեն, պէտք չ'ունինք՝ կը յարէ,
անոնց մէտրէսէները (զաստուուն) դիտելու,
եւ կը ցաւինք որ «մերիմները խափանուե-
ցան»:

Երեմիա Չէլէպիի կենսագրութեանը մէջ
(Հատոր Ա., էջ 181) գետեղած եմ անգամ մը
սոյն սողերը եւ ըսած՝ թէ ատոնք կը յայտ-
նեն, որ 17րդ դարուն Կ. Պոլսոյ մէջ Հայ վար-
ժարաններ գոյութիւն ունէին բայց փակուած,
ջնջուած են դժբախտաբար: Եւ միթէ կա-
րելի՞ էր որ Կ. Պոլսոյ Հայ գաղութը ապրէր
առանց վարժարանի երբ Երեմիա Չէլէպիի
պէս գիտնական անձ մը Կ. Պոլսոյ ազգային
մտաւորականութեան փայլը եւ պարծանքը
կ'ըլլար եւ իրեն հետ ուրիշ ուսումնականներ
ալ հոչակ կ'ունենային:

Բայց ո՞ր տեղն էր Երեմիայի աւաղած
այդ Դպրոցը. ե՞րբ եւ ի՞նչպէս էր այն բա-
ցուած. ահա ատոր պատմութիւնը, զոր կ'ու-
սանիմ Երեմիայի՝ Ապրօ Չէլէպիի վրայ գրած՝
«Վիպասանութիւն» ոտանաւոր աշխատու-
թիւնէն, զոր յիշատակած եմ Բ. Հատորին
մէջ (էջ 578—580), եւ ուրկէ յայտնի կ'ըլ-

լայ՝ թէ այդ Դպրոցը կը գտնուէր, Կ. Պոլսոյ
Հիւսար-Տիպի կոչուած վայրին՝ վաղեմի
«Ս. Նիկողայոս» Եկեղեցին¹⁹⁹:

Այս Եկեղեցին «Ս. Սարգիսի» հետ կ'այրի
1660ին եւ շա՛տ չանցած կը վերաշինուի.
սակայն Կառավարութեան ականջը կը հասցը-
նեն թէ առանց արտօնութեան եւ հրամանի է
այն շինուած, որով Տաճիկները զայն քանդել
կը սպառնան: Խնդիրը կը հաղորդուի Ապրօ
Չէլէպի մեծ աղբեցիկ Հայուն, որ, ինչպէս
պատմած եմ (Հատոր Բ., էջ 578), անմիջա-
պէս հրաման կը խրկէ Երեմիային, որպէս զի
Եկեղեցոյն խորանին առջեւը ամբողջովին
պատ մը հիւսել տալով ծածկէ, ու դպրոցի
զայն վերածէ:

Երեմիա անյապաղ կը կատարէ Ապրոյի
յանձնարարութիւնը, խորանը պատով կը
ծածկուի եւ Եկեղեցին արդարեւ կը վերա-
ծուի Դպրոցի՝ 1662ին: Հայ մանուկներ կը
սկսին յաճախել հոն երամովին, եւ թերեւս
Երեմիա ալ դասեր կու տար անոնց. բայց
այն ատենի Պատրիարքը՝ Ղազար Սեբաստա-
ցիին ո՞վ գիտէ ի՞նչ նպատակով կամ ակնկա-
լութեամբ, կը գիմէ մատնութեան շար ա-
լարքին, եղելութիւնը իմաց կու տայ Կառա-
վարութեան, որ ահա անմիջապէս մարդ կ'ու-
ղարկէ եւ հիմնայատակ կործանել կու տայ
չէնքը. եւ ասոր համար է ահա, որ սրտա-

¹⁹⁹ Այդ մասին Երեմիայի գրածէն յառաջ կը բե-
րեմ սողերս.
«Հազար հարիւր եւ իննեկի Հայոց թուական
(1109 + 551 = 1660)
Որ մեծ կրակն եղեւ ի շէնս Բիւզանդեան
Չկոն եւ ըզվիշտ եկաց ընտկաց ազգին համայն
եւ ըզվընասըն քաղաքիս անասական:
.....
Յորս եւ ի զէպ գեկեղեցեաց ասել ըզբան
Որք ի հըրոյս բոցակեղեան աւերեցան
Սուրբ Նիկօլեայ եւ Ս. Սարգիս Հայոց միայն:
.....
Պարոնքն մեր սոյն Չէլէպիս որ Աբրահամ
.....
Սա յօժարեալ սիրով սրտին հողեկական
Կամէր շինել բայց երկնչէր ի յարբունեան
.....
Արդ, Չէլէպեայն զսուրբ Նիկօլեայ տեղին առեալ
եւ ժողովուրդք նորս հաճեալ յայն խնդացեալ
.....
Չնիկողոսեայ սրբոյն պատճառ իմ ճառեցեալ
Չէլէպին անդ որ օտար աշխարհ էր զնացեալ
.....
Խրատ վասն այսմ առ մեզ անդուստ փութացուցեալ
Թէ զխորանն սրբութեան մեր յօրինեալ
Որով զերեսն պահարան իբրու ծածկեալ
եւ ըզյատեանն մինչ ի գրունս ի բաց թողեալ
Հիւսիս հարաւ բարձր ի յերկրէ բազմոց շինեալ
Ամս ինչ դպրոց ժողովուրդեան իբր զայն ցուցեալ»: